

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազերգությունը րանահյուսության հնագույն ժամրերից է: Լինելով ոչ թե դարերի խորքում մնացած հնագույն րանահյուսական ժամր, այլ մեր օրերում էլ կենցաղավարող և նախկինի պես թաղման ծեսի մաս հանդիսացող ժողովրդական րանարվեստ, այն ունի այժմեական մեծ նշանակություն թե րանագիտական ու ագգագրական և թե ժողովրդի հոգերանության, մտածելակերպի ու աշխարհոնկալման մասին պատկերացում կազմելու առումներով,

Թաղման ծեսի ժամանակ սգերգելը հատուկ է գրեթե բոլոր ժողովուրդներին՝ աֆրիկացիներին, ամերիկացիներին, նեգրերին, բոլոր եվրոպացիներին, սլավոններին, րալկանան ժողովուրդներին և այլն:

Չին սգո երգերի պատառիկներ են պահպանվել ու մեր օրերը հասել եգիպտական պապիրուսներում, իին հնդկական ծեռագրերում, հրեական գրականության մեջ, հունական էպոսում և ողբերգություններում, սկանդինավյան «Էդ-դայում», իին հոռոմեական երգիչների ստեղծագործություններում, ֆրանսիական «Ռուանդի երգում» և այլուր:

Չայ ժողովրդական րանահյուսության մեջ սգո երգերի առկայության մասին նախնական հիշատակություններ են թողել հայ պատմիչները: Առաջինը Փափստոս Բուգանդն էր, որ դրանց իրողությունը վաստեց արքաեղբորորդի Գնել, Մուշեղ և Մանուել Մամիկոնյանների մահվան նկարագրություններով, ինչպես նաև Ներսես Մեծի սահմանած կանոնների վերարտադրումով: Մեջքերելով սգո առաջին ուղղակի արտահայտությունը, նա պատկերացում է աալիս եղերամայր դարձած հանգուցյալի կնոջ կեղմից սգերգի վրապական հյուսափածքի հորինման և թաղման ծեսի ժամանակ դրա՝ նաև-

կիցներին ներկայացման հանգամանքների մասին<sup>1</sup>:

Մովսես Խորենացին ծայնարկու կույսերի և լականների մասին խոսում է Արտաշես թագավորի մահվան կապակցությամբ<sup>2</sup>:

Չայ ժողովրդի ողրալու ու կոժելու հարակա սովորությունն է վկայում նաև Ղևոնդ պատմիչը, ապա և պատմական դժնի պայմանների բերումով իրենց մեռելներին ողրալու հնարավորությունից գուրկ լինելու համարում ժողովրդին հասած չարիքներից մեծագույնը<sup>3</sup>:

Ողբերգակ կանանց կական րարձրացնելու սովորությունը հիշատակում է նաև Մովսես Կադանկատվացին և որպես Ալունլաց իշխան Աշոտի մաեվան առթիվ հնչած սգո իսոսք՝ բերում մի նախաղասություն. «Թող սյսպիսի տարի չգա ու չինի աշխարհի վրա, քանի մարդկային ցեղը կա»<sup>4</sup>: Նրա պատմության մեջ է պահպանված նաև դամրանական ողրի առաջին և ամենակատարյալ նմուշը՝ Դավթակ Քերթողի հյուսած մահերգը: Նետագայում մահակոսական հորինելու սովորության մասին նշել է նաև Մատթեոս Ուրիհայեցին<sup>5</sup>:

«Այս ժամանակը մեզ համար եղավ ողր ու վայերի պատմություն, և իմ այս երկն էլ հրավորում է ամենքին կոժի... թագավորից սկսած մինչև ջրաղացանը հավասարապես կեծեցին ամենքը քուրծ հագած ու սևագեստ, ամենքը կերակրից կտրված՝ իրենց րոնադատում էին առատանալ ողրով, այլև եղերամայր կանանց էլ էին հրավորում իրենց ծայնակցելու»<sup>6</sup>, -

<sup>1</sup> Փափստոս Բուգանդ, Չայոց պատմություն, Երևան, 1987, էջ 189 - 193, 349, 363, 395:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, Չայոց պատմություն, Երևան, 1940, էջ 128:

<sup>3</sup> Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982, էջ 107, 121:

<sup>4</sup> Մովսես Կադանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 175, 194, 263:

<sup>5</sup> Մատթեոս Ուրիհայեցի, ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 74:

<sup>6</sup> Արիստուկ Լառտիկերտցի, Չայոց պատմություն, Երևան, 1971, էջ 42, 46:

գրում է Արիստակես Լաստիվերտցին, իայ ժողովողի պատմության Եղերական ժամանակները պատմագրելիս, և հավաստում, որ ոդրեք իռողինելն ու Եղերամայրերին կոծի կանչելը առօրյա Երևույթ էր հսյկական կենցաղում:

Թովմա Արծրունու և առանձնապես Ամանունի «Պատմություն տաճն Արծրունյաց» Երկում ավելի մանրամասնորեն, քան նախորդների պատմություններում նկարագրվում է Ղերենիկ հիւսանի մահկւան տեսարանն ու նրա կնոջ, այլև թաղման արարողության այլ մասնակոցների, ողբաստեղծման ընթացքն ու կարգը<sup>7</sup>: Ամանունը մեջքերում է սգո ավելի ընդարձակ և բազմաբովսնդակ իրուքեր, քան Բուգանդը, և դրանով իսկ մատնանշում թաղման ժեսի և սգո Երգերի շոշափած նոր գաղափարներ ու մոտիվներ:

Ժողովողական սգո Երգեր՝ որպես այդպիսիք սպազրու մեզ հայտնի առաջին բանագետը Շատրունի Ալիշանն էր, որը իր «Յայոց Երգը ուամկականք» բանականական ժողովածուի մեջ (Լոնդոն, 1852 թ.) գետեղեց արդեն «Բազմավեպ» համդեսում տպագրած (1843, 1845 թք.) «Ողբ մոր ի վաղամեռիկ որդին» վերնագրով Երկու ողբերգ (էջ 31, 33), և յանքին հրաժեշտ տալու պահի իմաստափական խոն ներկայացնող «Յամեն առաւօտ և լոյս» Երգը, «Ողր կաքաւու» այլարանական և «Նարակոծեալն ի ծովուն Կսինայ» մերձավորի անունից հյուսված սգերգերը: Արանք, առանձնապես առաջին Երկուսը, լինելով միջնադարյան առաջին տպագիր սգո Երգերը, միաժամանակ ամենածավալուններից և բանաստեղծական լուծումներով ամենակատարյալներն էին:

Մ. Միհանսարյանը 1868 թ. Ա.Պետերբուրգում լույս տեսած իր «Քնար հսյկական» ժողովսնուի ներածության մեջ իրունկա թաղման ժամանակ կատարվող ողբերգերի մասին, կոկնում է այն ամենը, ինչ արդեն գրել էր Ա. Պալասա-

նյանը<sup>8</sup> և ընթերցողներին է ներկայացնում Դևոնի Ալիշանի հրապարակած Երկու ողբերն ու «Բազմավեպից» (1859 թ., էջ 70) արտասպած և մեկ ողբերը:

Ժամանակագրական առումով նշված ժողովածուներին երրորդում է Ա. Տևկանցի «Յայերգը» (Թիֆլիս, 1882 թ.), որի «Եղերերգականք» (էջ 173) բաժնում գետեղված են մեկ թուրքերեն, մեկ հայերեն-թուրքերեն և Երեք հայերեն Եղերերգեր: Սըանցից «Տաղ ի վերայ ծովու» Երգը Ալիշանի հրատարակած «Նավակոծեալն...» Երգի մի ատարերակն է, «Ապաշաւը» և յանքի անցողիկության մասին խորհրդածություն, իսկ «Եղերերգութիւն ի մահ նահատակութեան Ծերենց Գորգոր Վարդապեսի Խլաթեցոց» ողբերգը պատկանում է Առաքել Բաղդիշեցու գրչին, սյն ձևառական ու մոտիվային ընթեանրություններ ունի ժողովողական սգո Երգերի հետ և պարունակում է Վերջինիս ավանդական բովանդակության հիմնական տարրերը. սգի հրավեր, ննջեցյալի գովք, մահկւան համգամանքների նկարագրություն, մահկւան առաջ բերած վշտի մեծության պատկերում:

1884 թ. առանձնապես բենուն էր բանահյուսական նյութերի հրատարակման առումով: Կ. Պոլսում լույս է տեսնում Յ. Ալլահվերդյանի «Ուլնիա կամ Զեյթուն. լեռնային ավան ի Կիլիկիա» գիրքը, որը Կիլիկիայի հսյերի այլ սովորությունների և հավատալիքների շարքում, հեղինակը անդրադառնում է նաև մահկւան հետ կապված ծեսերին և նշելով, որ Եկեղեցական արարողության ողջ ընթացքում կանայք բոլորած դագաղի շուրջը լալիս են, մեջքերում է Երկու տող արձակ սուզ. «Անա՞ն քիրիր, մարի՞ն, տունիս կո կարը, արիւիկիս կո խաւարը, չի՞րք պիտի էնիմ, չու՞ ալիտի էնիմ» (էջ 96): Չնայած փոքր ծավալին, այն գաղափար է տալիս սգո արձակ Երգերի ոճի և ուղղության մասին:

Նոյն թվականին, հայկական մշակույթի նոյն օճախում Ա. Ությունյանի խմբագրությամբ լույս տեսնող «Ամանադաբան ժողովողեան» հանդեսի 30-ընդամարդում տպագրվում է սգո Երգե-

<sup>7</sup> Թովմա Արծրունի և Ամանուն, պատմություն Արծրունյաց տաճն, Երևան, 1985, էջ 412 - 414:

<sup>8</sup> «Պալասանեան Ա. Պատմութիւն հայոց գրականութեան, հ.Ա. Բանաւոր գրականութիւն, Թիֆլիս, 1865, էջ 165:

ոի մի շարք և Բագարգյուղի թաղման սովորությունների մի նկարագրություն, ըստ որի կանայք հանգուցյալի ողբը սկսում են անմիջապես մահվան պահից և շարունակում՝ յուրաքանչյուր արևածագին գերեզման գնալով, մինչև հիշատակի խամրումը: Սգո երգերի սյոյ շարքը կազմված է տասնչորս՝ մեկից մինչև ութ երկտողեր պարունակող եատվածներից: II, III, IV, VI, IX հատվածները սպում են պանդիտության մեջ մեռած հարագատին կամ հյուսված են նրա ամուսից, I և V մասերում ողբում է սիրած էակին կորցրած սիրահարը, VII և XIV երգերում հեծենում է նորը կորցրած գավակը, VII և X ամենածավալուն և ամենահոգիչ հատվածները ներկայացնում են թաղումից որոշ ժամանակ անց գերեզմանին այցելած նոր երկխոսությունը մեռած որդու հետ, XI-ը ընթեամուր բնույթի սգերգ է, որ հնարավրո է երգել յուրաքանչյուր հարագատի մահվան ղեպքում, իսկ XII-ը որդեկորույս մոր ողբ է: իր բախտակից մեկի վշտի առիթով: Այս երգերը հիմնականում ունեն 11 վանկանի նույնահանգ եղկտողեր (պատահում են նաև 7, 9, 12 և 13 վանկանի տողեր): Ողբը անշափ ագեցիկ, քնարական և գեղաշունչ է:

Նույն տարվա հունիսին Զմյուռնիսյում հայրենագետ Գ. Արվանձյանը տպագրում է Ակնա Ապուչեիս և Կամարակապ գյուղերից գրառած «Մահ-երգը»: Դարձյալ առանձին երգ-հատվածների շարք, իր ծևակորմամբ և արտահայտած հույգերով տարբեր նախորդից, բայց ժողովրդական երգերին հատուկ օրինաչափությամբ կրկին կազմված հիմնականում 11 վանկանի տողերից կամ հյայրենի չափով հյուսված երկտողերից: Այս երկու հրապարակումներից արդեն պարգ է դառնում, որ հանգուցյալի վրա լալկան կանսյօք և հարագատները, շարունակելով միմյանց, ամենայն եավանականությամբ նույն մեղեղիով, երգում էին իրենց իմացածքուր սգո երգերը՝ անկախ մեռածի պանդուստ, նշանած կամ սիրուն լինելուց, այլապես դրանք չեն գրառվու և երատարակվու որպես ամբողջական երգ:

Բանահյուսական մեծարժեք ժողովածու է 1885 թ. Թիֆլիսում լույս տեսած Գ. Շերենցի

«Վանայ սագը» գիրքը: Այն Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների և հանելուկների շարքում ունի նաև վերոհիշյալ «ղարիափի» մահերգերի մոտիվներով հորինված «Պանդիստի երգեր» (էջ 63), «Ամյիշատակ մեռելու» հոգեպաշտական, հավատալիքային հյուսվածքը, «Կտրիճ մեռնելու ժամանակ» ինքնատիպ սգերգը. ինքնատիպ ոչ միայն մեղմ ու գոռ արտահայտչածների րագմագան համակցություններով, այլև մահվան երևույթի առաջարկած հարափուլուս տրամադրություններով, և ղարձյալ յուրօնինակ մի սգերգ, որի տարբերակը քիչ ավելի ուշ լույս ընծայեց S. Նավասարդյանը իր «Հայ ժողովրդական հեքիաթների» Զգբքում (Թիֆլիս, 1890 թ.)՝ «Ինչ բան որ կը բանրթողս արեցի»:

Տասնամյակներ էին պետք, որպեսզի ժողովրդական բանահյուսության նկատմամբ Եվրոպյայում ծագած եետաքրքրությունն ու երեմն պաշտամունքի հասնող համակրանքը իրենց արձագանքը ունենային հայկական մամուլում և հրատարակչության մեջ: Այս առումով անտեսված էր նաև սգերգությունը: Գրառման դժվարություններն ու ծանր ապրումներով ուղեկցվող տրամադրությունները հավանաբար վանում էին ժողովրդի բառ ու բանով հետաքրքրվող սակավաթիվ մարդկանց: Հետաքրքրություն ցուցաբերողների շարքում էր Կ. Պոլսում հրատարակվող «Մասիս» լրագիրը: 1885 թ. № 3763-ը և 1886 թ. № 3823 -ը տպագրում են մեկական ժողովրդական սգերգեր. Մ. Սարընի գրառած «Ես Արշակն եմ Կոլավերցին» Մշո բար-բառով և Գ. Արվանձյանի գրառած «Ովանեսը»՝ «Կալաֆկայի և Միւրմենիոյ բնակչաց»: Այս երգերի տարբերակները եետագայում տպագրվեցին տարբեր բանահյուսական ժողովածուներում և երգարաններում<sup>9</sup>:

Արձակ սգո խոսքեր են գետեղված հայ ագագրության և բանահյուսության գրառման և ուսումնասիրման մեջ մեծ դեր խաղացած «Եմինյան ագգագրական ժողովածուի» Ա հատորում

<sup>9</sup> Անարոնյան Ա, Սուրմալուի ժողովրդական երգեր, Երկերի ժողովածու, հ. 4, Բոստոն, 1948, էջ 123, Նշխարներ Նամշենի և Տրավիկոնի բանահյուսության, Երևան, 1985, էջ 86, Թումանյան Ա. Հայրենի երգ ու բան, ե. 3, Երևան, 1986, էջ 137:

(Մոսկվա - Վաղարշապատ, 1901 թ.) և Գ. Տեր-Սիմեոնյանի «Թիֆլիսեցոց մտաւոր կեանքո» աշխատության Ա մասում (Թիֆլիս, 1886 թ.): Վերջինում կա նաև մի եզակի քայակ՝ կատակ-սգերդ. պառակ կնոջ դիմումը մահացած ծեր ամուսնուն.

*Թէ ասիր աբա կու բերիմ.*

*Դիդին կարա կու բերիմ.*

*Պառաւ շում ու քօփակ շում,*

*Ի՞նչի՞ երարիմ չորս ծում:*

Մահր այնքան ժամանակին ու բնականորեն է այցելել մարդուն, որ րացառելով վրշտը՝ անգամ ծնել է կատակի տրամադրություն:

Որոշակի ազգագրական և գեղարվեստական արժեք է ներկայացնում նաև Կ. Կոստանյանցի «Նոր ժողովածուի» Ա պրակում հրատարակված (Թիֆլիս, 1892 թ) «Տաղ վասն ջուդայեցի Նազարեթին» ողբը: Սակայն հայ բանագիտության պատմության մեջ առանձնապես նշանակալից դեր իսպահին նախորդ դարավերջին լուս տեսած ներքոհիշյալ երկու բանահյուսական ժողովածուներու, որոնց հեղինակները առանձնակի ուշադրություն են նվազել ժողովրդական սգո երգերին և թաղման ծեսի բնթացքում դրանց իսպահած դերին: Խոսելով ջայլքի կամ գովքի ժամրի մասին, Վ. Տեր-Մինասյանը իր 1892 թ. Կ.Պոլսում երատարակած «Անգիր դպրութիւն և առակը» եարուստ ժողովածուի ներածության մեջ գրում է. «զորս կեղանակեն եղերամարք, բատ հին բարբառի, լալկանք. բատ արդի ուամիկ ասութեան: Սոքա կը ջայլեն այսինքն կ'ողբեքն ննջեցելու ետևեն կամ առջևեն երթալով և այգուցին բոլորելով ննջեցելոց գերեզմանին շուրջ»: Ապա բերում է ողբերի (էջ ԾԵ, ԶԳ) համա-չափ, երաժշտական և հուզիչ օրինակներ:

Պարզ է, որ եթե այսպիսի արվեստավոր ողբեր էին երգում 19-րդ դ. Վերջին, երբ արդեն 16 դար շարունակ քրիստոնեությունը պայքարում էր իրանց դեմ, ապա ինչպիսի՝ արվեստ կլիներ առկա այդ ասպարեզում, երբ այն արծակ-համարձակ տեր ու արքա էր մաեվան արարողության:

Սզո երգերի բնագրերի մի ստվար շարք է գրատել, համապատասխան ծանոթագրություններով ու լրացուցիչ տեղեկություններով մեզ փոխանցել Գ. ճանիկյանը («Դնութիւնք Ակնայ», Թիֆլիս, 1895 թ.): Պատահական չէ, որ այս ողբերգերի մեծ մասը հորինված է հայրենի չափով, քանզի դրանք զրառված են Ակնից՝ հսյրենների և անտունինների հայրենիքից: «Այս քաղաքի անարեւ մբնոլորտը, քարերու մեջ իր կկզած դիրքը, երկար ուղիղ բարտիններով ու թութերով, և ապրելու անհրաժեշտ պէտքին արդինք եղող անհրաժեշտ պանդիստութիւնը, sensitif հիւանդութեն նր վարակած են տեղացի կինները, որոնց ամէնքն ալ ճակատագրապէս հարկադրուած են լալկան-բանաստեղծներ ու լալ», - Ակնի մասին գրում է Ալուշեղ Վարդը<sup>10</sup>:

Ճանիկյանի հրատարած շուրջ 104 ողբերգերը աչքի են բնկնում հակիրծ, պարզ կառուցվածքներով՝ առանց ավելորդաբանությունների, գեղարվեստական հեկված պատկերներով և ինքնատիպ լուծումներով: Սրանց մի մասը արտեն ներկայացրել էր Գ. Սրվանծոյանը, սակայն, ի տարրերություն նրա, ճանիկյանը անփոփ հատվածները առանձնացնում է որպես առանձին երգ:

19-րդ դարի վերջին (1896-1906թթ.) ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման աշխատանքները կենտրոնանում են ե. Լալայանի հիմնադրած «Ազգագրական հանդեսի» էջերում: Այլայլ ազգագրական բանահյուսական նյութերի հետ միասին մանրամասն տեղեկություններ են իրատարակվում Բորչալուի, Նոր Բայազետի, Զանգեզուրի, Գողթնի, Վայոց Զորի, Վասպուրականի, Աշո, Վարանդայի, Գանձակի, Տարոնի, Բուլանրիսի, Նոր Նախիջևանի հայ բնակչության թաղման ծեսերի, ողբալու սովորությունների և մահվան հետ կապված հավատալիքների մասին: Երևան են հանգում նոր սզո երգեր, որոնց զգալի մասը զրանել էր ինքը՝ Լալայանը: Ազգագրական եանդեսի» Գ զոքում նկարագրելով Սիսիանի թա-

<sup>10</sup> Վարդ Ա., Երգը իրեւ հոգեկան պէտք, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1899, № 43, էջ 681:

ղումն ու մեռելոցը, նա գրում է. «Լալկան մէրը նստում է ննջեցյալի սնարի մոտ, իսկ միւս կանայք շրջապատում են դագաղը, որ գետնին է ղրած լինում: Լալկան մէրն երգելով ասում, միւսները կրկնում են և լալիս»: Եվ րերում է ողբի մի փոքրիկ նմուշ: Այս ոճով է Լալայանը շարունակում է իր աշխատանքը նաև եետագայում: Ե գրում, «Շիրակի ժողովրդական երգեր» շարքում տպագրված է մի ողբերգ. «Ողոր սիրահարների»: Սիրածին անդարձ կորցրած աղջիկը վիշտը պատմում է բնությանը, որը դառնում է երգի քնարական եերուսներից մեկը: Այստեղ գետեղված է նաև Բենսեի՝ Բուլանըից գրառած երկու կտոր արձակ սուգ: «Ազգագրական հանդեսի» 10-րդ գրքում Ե. Լալայանը տպագրում է Բորչալուի գավասոում երգվոր վեց սգերգ՝ իհստ տարրերակված ըստ քնարական հերոսների արժանիքների և երգողի վերաբերմունքի. «Մանկան վրա», «Նորահարսի վրա», «Երկրագործի վրա», «Դարսը ողբում է սկեսրութը»:

Գեղարքունիքի երկու ծավալուն սգերգեր են տեղ գտել նույն հանդեսի 16-րդ գրքում: Առավել հուգիչ և պատկերավոր են Ե. Լալայանի «Գամձակի գավառ» ուսումնասիրության և «Զավախքի րուրմունք» րանահյուսական ժողովածուի մեջ ընդգրկված րազմագան ոճավորումներ ունեցող երեքական ողբերը:

«Ազգագրական հանդեսի» եետ միաժամանակ րանահյուսական և ազգագրական նյութերին մեծ տեղ էր տալիս Կ. Պոլսի «Բիլրակն» պարուերականը: Այն 1899-1900թթ. հետաքրքիր, ծավալուն տեղեկություններ և տպագրում Բարերդի, Մարգվանի, Աղերդի, Ալարիայի, Սիվրիիսարի, Թալասի, Ակնի, Տարենտեի, Եֆքերեի, Ռոտոսթոյի, Գալճիքի, Թավրիդի, Իգմիրի, Ամասիայի և Արևմտյան Դայաստանի այլ բնակավայրերի ժողովրդական սովորությունների, այդ թվում և թաղման ծեսի (1899թ., №№ 2, 16, 34, 41), առանձնապես մահվան հետ կալված հավատալիքների մասին (այդ երկու ապրիների գրեթե որոլոր համարներում): Խմբագրությունը մի քանի առիթներով տողատակ

հորդորում է սգո երգեր հավաքել և տպագրում է մի շարք ողբերգեր: Այսպես 1898 թ. № 30 -ում տեղ է գտել «Մրմունջ մը ոամկական» երգը՝ Եղանի րարրառով: Այն մեղմ գույներով, պարզ, րայց ազդեցիկ արտահայտություններով սգում է Խանում Եվայի մահը: 1899 թ. № 33 -ում տպագրվում է Դահրի գրառած «Փիտկրոցու ողբը» սգերգը, իսկ 1900թ.՝ Երկու սգերգ (№№ 43 և 44-ում): Առաջինը վերնագրված է «Մահերգ Ատա-Բագարի» և ներկայացնում է սգո տաղիկների շարք՝ մոր և որդու երկխոսության ձևով: Շարքի առանձին հատվածներ աղերսներ ունեն Գ. Արվանձտյանի և Յ. ճանիկյանի գրառումների հետ, սակայն քնարական շնչով, արտահայտվելու կերպով և տոնայնությամբ այս երգը նման է Բագարգությաց գրառված շարքին և թողնում է նույն եղանակով երգվելու տպագրություն: Երկրորդի՝ «Մահերգ Ապնայ րարրառվե», տարրերակները արդեն հրապարակել եր Յ. ճանիկյանը:

Խորումկ գգացմունքների և իմաստում խոհերի տեր Ս. Թումանանը գրանել է մի շարք արժեքավոր սգո երգերի ոչ միայն տեքստեր, այլև մեղեղիներ և դրանցով իսկ պատկերացում տվել այն սրտաճմիկ ժողովրդական երաժշտական ստեղծագործությունների մասին, որոնք ուղեկցում էին թաղման հանդեսին<sup>11</sup>: Ծանոթագրություններում նա հետաքրքիր կարծիքներ է հայտնում դրանց մասին:

20-րդ դ. Երկրորդ կեսից հրատարակվում են մի մեծ շարք րանահյուսական ժողովածուներ և երգարաններ, որոնք պարունակում են ինչպես արդեն հրատարակված, այնպես էլ նոր գրառված սգո երգեր<sup>12</sup>:

<sup>11</sup> Թումանան Ս., Դայենի երգ ու բան, հ. 1, Երևան, 1972, էջ 81, 86, 89, հ. 2, Երևան, 1972, էջ 79, 202, 354, 386, հ. 3, Երևան, 1986, էջ 138:

<sup>12</sup> Գանձար Թարթառ, Ազգային երգարան հայոց, Ս. Պետրոսյան, 1856, էջ 127-130, 135, Երգարան-Կարին, Սոսկա, 1894, էջ 27, Նոր քնար եակական կամ հավաքածոյ հին և նոր ազգային երգերու, Վառնա, 1897, էջ 177, Վարդանյան Տ., ժողովրդական անգիր ռանասահոժություններ, Թիֆլիս, 1901, էջ 15, 20, Միխրարեան Ա., Տաղեր եւ Խաղեր, Ալեքպու, 1900, էջ 111, Գաւառացի Յ., Երգեր, առակներ, եանելուկներ, թերահաւատութիւններ..., Խոտրքոյ, Տիֆլիս, 1903, էջ 30, Դայկագունի Յ., Երգարան,

Ագերգերի մեղեդիներ են գրառել և հպանցիկ բնութագրումներ արել նաև Կոմիտասը, Ս. Մելիքյանը, Ա. և Ս. Բբուտյանները, Ա. Փահլևանյանը և ուրիշներ<sup>13</sup>:

1970 թ. ԳԱ Դնագիտության և ազգագրության ինստիտուտը սկսեց հրատարակել «Դայ ազգագրություն և րանահյուսություն» մատենաշարը, որի պրակտներում, ի թիվս այլ բանահյուսական նյութերի, տեղ գտան նաև սգո երգեր<sup>14</sup>:

Խնդրո առարկա բնագավառի վերաբերյալ ուսումնասիրություններ չկան, կան առանձին հպանցիկ դատողություններ:

Առաջինը մեր գրականության մեջ այս մասին խսոք է ասել Յ. Գաբրիջյանը, հայտնելով, որ Դայաստանն էլ, շատ առաջ «յատուկ երգեցկաց դասեր ուներ՝ եղերամարք կամ ծայնարկութ», որոնք իրենց արվեստական ողբերով կոժում

Թիֆլիս, 1909, էջ 42, Տատրակ Տարօնյ, Թիֆլիս, 1910, էջ 158, Ազգային ընդարձակ երգարան, Պեյրով, 1932, էջ 43, 66, 83, 103, 384, 421, Դանալանյան Ա., Դայկական խորհրդային Ֆոլկորը, Երևան, 1938, էջ 70, Մանացական Ա., Դայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 223, 360, 363, նոյսին՝ Դայերներ, Երևան, 1995, գիր II, գլ. IV, 7, 9, 41, Ներդիմ Բաանի ազգագրություն և բանահյուսություն, Երևան, 1974, էջ 309, Դակուրյան Գ., Դայերնի եզերը, Երևան, 1978, էջ 117, Տարօնի ժողովրդական երգեր, Երևան, 1978, էջ 26, 27, Դարակոր արմատներ, Երևան, էջ 207, 211, Նշանարներ Դամշնի և Տրավիզոնի բանահյուսության, Երևան, 1986, էջ 86, Արագած բարև արա, Երևան, 1977, էջ 16, 59, Դադուրյունյան Լ., Նշանարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991, էջ 316, Ավազյան Վ. Կիլիկիա, Երևան, 1994, էջ 168, 174 և այլն:

<sup>15</sup> Կոմիտաս, Դայ ժողովրդական երգեր, տեսոր I, Երևան, 1935, Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հ. II, Երևան, 1950, էջ 74, 133, Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1969, Մելիքյան Ա., Ուրվագիծ հայ երաժշագրության պատմության, Երևան, 1935, Գրուտյան Ա., Ռամկական միջնադարիներ, Ալեքսանդրապոլ, 1901, Բրուտյան Ա., Դայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, գեղջկական երգ, Երևան, 1983, Փակիլմանյան Ա., Սահակյան Ար., Թալին, Երևան, 1983, էջ 76 և այլն:

<sup>16</sup> Դայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնահյուսություններ), (այսուեեսն՝ ԴԱԲ) Երևան, 1970 - 1991, պր. 2, Փորձեյան Խ., Նոր Նահիջևանի հայ ժողովրդական բանահյուսություններ՝ 5 սգո երգեր, պր. 8, Ավազյան Ա., Արճակ՝ 2 սգո երգեր, պր. 9, Նագարյան Ա., Եղմիածնի և Աշտարակի բանահյուսություններ՝ 1 սգերգ, պր. 10, Գևորգյան Գ., Ղալար՝ որդի 4 կտոր և 1 ծավալուն երգ, պր. 11, Միքայելյան Գ., Նոր Բայագեսն՝ 1 սգերգ, պր. 14, Գրիգորյան Ո., Գեղարքունիք՝ շուրջ 10 սգո երգերի մի ամրուց շարք, պր. 16, Ավազյան Վ., Մուսա լեն՝ մեկ սգերգ.

Ին հանգուցյալին, ապա նշում է դրամց րովանդակության ընդհանուր կողմերը<sup>15</sup>: Գաթրճյանը տեղեկացնում է նաև, որ Եկեղեցին թշնամաբար էր վերաբերվում այդ քնարական երգերին և ձգտում էր իր ժամը սաղմոսներով, օրինություններով փոխարինել դրանց:

Քննության առնելով հայ րանավոր գրականության անցած ուղին, փուլերը, բնույթը ու առանձնահատկությունները, դասակարգելով հայկական ժողովրդական քնարերգության տեսակները, Ս. Պալասանյանը անդրադառնում է նաև Եղերամայրերի և ծայնարկուների մրմունջներին ու փորձում ժամանակակից նմանատիպ երգերի միջոցով կարծիք հայտնել առավել հնագույների մասին: Բանագետը հակիրճ բվարկում է սգո երգերի հիմնական թեմաները, մոտիվներն ու կառույցները. «Այն աղերսական իօսքերը, որով ողրացողը պահատում է ննջեցեալին քնից վեր կենալ ու իր սովորական գործերով պարապել, այն անեքքները, որ նա թափում է ննջեցեալի գլխին, տեսնելով որ նա խուլ է մնում իր աղաչանքներին, հանգուցեալի ընտրած անդուն ու անպատուհան բնակարանի - գերեզմանի տիրուր նկարագրութիւնը. Նրա կենդանութեան ժամանակ արած ու գործածը, հիվանդ օրեզին ասած ու խօսածը, վերջապես այն փաղաքշական ածականները, որ նա տալիս է ննջեցեալին, տեսնելով, որ իր բոլոր գանգատական իօսքերը անպատասխան են մնում, այն վերջին իրաժարական ողջունը, որի հետ միասին ուրիշ բարևներ է ուղարկում նրանից առաջ մյուս աշխարհ գնացողներին - այս խօսքերը մեր միտքը քցում են Փառանձենոյ իր գնել ամուսնու մարմնի վրա երգած ողբի նկարագրութիւնը»<sup>16</sup>:

Պալասանյանը նրամտորեն նկատում է, որ իր բովանակության շոշափելի կողմերով ողբը թիչ փոփոխություններ է կրել դարերի ընթացքում: Ինչքան էլ հեռու բանագիտական ընդհանըացումներից ու պոետական գնահատա-

<sup>15</sup> Գարրմեան Յ., Պատմութիւն մատենագիտութեան հայոց, Վիեննա, 1851:

<sup>16</sup> Պալասանյան Ա., Պատմութիւն եայոց գրականութեան, հ.Ա, Բանաւոր գրականութիւն, Թիֆլիս, 1865, էջ 165:

կանոներից, այնու-ամենայնիվ սա սգո երգերին տրված ամենածավալուն և արժեքավոր բնութագիրն է:

Հոգևոր երգերի ժողովողականից ծագելու և նրա հիմքի վրա գարգանալու ելակետն է առաջադրում Գ. Հովսեփյանը, 1898 թ. տպագրած իր «Ժողովողական բանականության հետքեր միջնադարյան տաղարաններում» հոդվածում («Արարատ», էջ 544): «Ի՞նչ են օրինակ գանձարանները. հոգևոր երգեր ողբեր, որոնք յառաջ են եկել ժողովորդի իւր ննջեցեալները կոժելու սովորութիւնից», - գրում է նաև ափսոսում, որ հնարավոր չէ ծավալվել այս առնչությունների ուսումնասիրության ասպարեգում՝ նյութի բացակայության պատճառով,

Սգո երգերին ավելի բազմակողմանիորեն է մոտենում Մուշեղ Վարդը՝ իր «Երգը իբրև հոգեկան պէտք» հոդվածում (Բիւրակն, 1899, №№ 47-48) և անում է մի շադր ուշագրավ դիտողություններ: Նախ այն, որ սգո երգերի հիմնական նպատակը միշտարելն է՝ նման այլ վշտերի բարդատումով, «...մինչըետ հոս, այս մահտան մէջ, միփիթարութիւնը պէտք էր իր գործը կատարեր հաւատքի ու յոլսի երջանկութեան բառերը կը մնան ներկաներու սրտի յետսախսաւին մէջ ու նմանաբուժական մեթոդը կու գալ արցունքը արցունքով սրբելու»: Ապա շեշտելով, որ սգո երգերում ամենագործածական գեղարվեստական հնարանքներից մեկը. «Դագաղներու յիշատակին երգուած ողբերը կանխամտածումի ու նախապատրաստութեան արդիւնք չեն բնաւ, յանկարծախօսութիւններ են անոնք՝ տարբեր դիմանութիւններով»: Մուշեղ Վարդը գրական զգայուն հոտառությամբ որսում է նաև բաղումից հետո հյուսված ողբերգերի խոհա-փիլիսոփայական, միսափկական երանգները: Եվ վերջապես, նա մեջքերում է մինչ այդ չերատարակված մի քանի երգեր:

Թնարկվող թեմայի վերաբերյալ որոշ տեղեկություններ է հաղորդել նաև Գ. Գևարքունին<sup>17</sup>, բացատրելով «Եղերամայր» և «Ճայնարկու»

բառերը, ինչպես նաև փորձելով ամփոփ կարծիք ներկայացնել սգո երգերի երկխոսական կառուցվածքային տարրերի մասին: Ըստ նրա՝ ողբեր կազմվում է հանգուցյալին տրված հարցերից, նրա կողմից ծայնարկու կանանց տրված պատասխաններից և նրա կյանքի մասին հիշատակություններից:

Ինչպես բանահյուսական մյուս գրեթե բոլոր ժամրերի, այնպես էլ սգո երգերի արմատների, բովանդակության և տաղաչափական ծևերի մասին բարձրարժեք դատողություններ է կատարել Մ. Աբեղյանը: Նախ, պարգելով, որ դրանք հայրենի չափով հյուսված անդրանիկ տաղերն են, փաստում է դրանց բուն ագգային ծագումն ու որակը<sup>18</sup>, ապա ապացուցելով, որ դրանք վիպական երգերի առաջացումն ու ծևավորումը սնուցող ադրյուրներից մեկն են, մատնանշում է սգո երգերի հնությունը, հարուստ վրապական բովանդակությունը և կենցարավարման գործնական հանգամանքները: «Դրանք (կոժի երգերը - Ե. Դ.) ժամանակի միակ պատմական հիշատակարաններն են եղել կամ ճիշտ ասած՝ նույն դերն են կատարել, ինչ որ մեր ժամանակ լրագրերը կատարում են՝ լուր տալով եղած դեպքերի համար և մահաբան (նեկրոլիս) գրելով նշանավոր անձերի մահվան առիթով»<sup>19</sup>:

Ժողովողական սգերգերի ժամրային ամփոփ բնութագրման վործ է կատարել Ա. Ղանալանյանը իր «Կայ ժողովողական բանահյուսություն» հոդվածաշարի 8-րդ պրակում և տվել դրանց բնորոշումը. «Սգո կամ լալիքի երգեր են կորչեմ եայ ժողովողական քնարերգության այն նմուշները, որոնք հորինվել են մահվան առթիվ և կատարվել հուդարկավորության ժամանակ ննջեցյալին ողբալիս» (Երևան, 1946թ., էջ 42): Այս բնորոշումը թերի է այն իմաստով, որ սգո երգերը կատարվում են ոչ միայն հուդարկավորության, այլև հետագա արարողությունների ժամանակ, բայց աներկրայելի տարբերակիչ գիշ է դրանց՝ մահվան առիթով հորինվելը:

<sup>17</sup> Գեղարքունի Գ., Յին հայ րանաստեղծություն: Գողթան երգեր, Առֆիա, 1936, էջ 17:

<sup>18</sup> Աբեղյան Մ., Գուսանական ժողովողական տաղեր, ժողովողական խաղիկներ, Երևան, 1940

<sup>19</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ.Ա, Երևան, 1966, էջ 489:

Դանալսնյանը շատ համառոտակի ցույց է տալիս նաև սգո երգերի գործառույթի էվլուցիան. նրանց թովչական-կախարդական նշանակության խամրումը և տեղի տալը հարագատների վշտի քնարական արտահայտության առջև։ Այս ընթացակարգը, սակայն տեղի ունենալով վերաբերմունքի և գիտակցության ուղղութներում, երգերի տեքստերում և ծիսական վերարտադրություններում, շատ րան է պահել նախկին սմահավատքից։

Միջնադարյան ծեռագրերում պահպանված ժողովրդական սգո երգերի տարրերակների հայտնարերման, դրանց գիտական հրատարակության և րանահյուսական առումով դրանց հնքնության պարզման ճանապարհին անգնահատելի ներդրում էր Ա. Մնացականյանի «Դայլական միջնադարյան ժողովրդական երգեր» (Երևան, 1956 թ.) ժողովածուն, որտեղ երգերը տպագրված են արժեքավոր ծանոթագրություններով հանդերձ, ապա նաև «Դայըններ» (Երևան, 1995 թ.) գրական-գիտական առումով մեծ արժեք ներկայացնող տաղագիրը։ «Միջնադարում ժողովրդական երգերի տարածման ոնագավառներից մեկն էլ հանդիսացել են թաղման և սգո հանդեսները», - իրավամբ նշում է նա առաջին գրքի ներածականում։

Ողբի ժամրի համարյա սպառիչ պատկերն է ներկայացնում Պ. Խաչատրյանը «Դայ միջնադարյան պատմական ողբերը» ուշագրավ ուսումնասիրության ներածականում։ Նա նշում է այն կաքառը հանգամանքը, որ «Առաջին ողբերը երևան են եկել մեծ մասամբ իրու ժողովրդական սգո ծեսի, այլ կերպ՝ մահենքի, անհրաժեշտ մաս, թաղման արարողության հետ կազմել մեկ միաձույլ (սինկրետիկ) արվեստ»<sup>20</sup>։

Զատորոշելով գրական ողբի տարատեսակները, վախճանվածի հիշատակի եղեղեղգումը դիտարկում է որպես դրանցից մեկը, որը հանդես է գալիս գերեզմանական կամ դամրանական ողբերի ու մեռելաթաղի ողրագանձերի

<sup>20</sup> Խաչատրյան Պ., Դայ միջնադարյան պատմական ողբերը, Երևան, 1969, էջ 5։

տեսքով և ամենասերտն է առնչվում ժողովրդական մահերգին։ Պ. Խաչատրյանը ուշադրություն է հրավրում նաև ողբի ժամրին բնորոշ միշտ գեղարվեստական միջոցների ժողովրդական բանարվեստից ծագած լինելու իրողության վրա։ «Դուդարկավրության ողբերին և ընդհանրապես րանահյուսական ստեղծագործություններին հարագատ այլ առանձնահատկություններ ևս նկատելի են հայ ողրագրության մեջ։ Որոշ երկերի սկսվածքում, օդինակ, խիստ ընդգծվում է ծայնի սաստկությունը և գգացվում տագնապալի շարժում, անհանգստություն, որպես թե ողբագրի ականջին է հասնում րարձրական մի կանչ, ապա հետզհետեւ պարգում է ճիշ րարձրացնողի ով լինելը, որը պատմում է վերահաս ախուր մի իրողության մասին»<sup>21</sup>։ Ողջ ուսումնասիրությունից րիսում է այն հետևողությունը, որ միջնադարյան գրականության ամենածավալուն, ամենաթուլակալից ու երկարակյաց ողբի ժամրի համար որպես պատվիանդան ու սնուցիչ հող է ծառայել ժողովրդական սգերգությունը։

Ժողովրդական սգո երգերի գրականության և արվեստի այլևայլ տեսակների վրա ունեցած ագրեցությունների մասին ակնարկում են նաև Ռ. Սիմոնյանը<sup>22</sup>, Ռ. Ասհակյանը<sup>23</sup>, Ռ. Չովեանինիանը<sup>24</sup>, Ծ. Նազարյանը<sup>25</sup>, Ա. Ղագինյանը<sup>26</sup>, Վ. Սաֆարյանը<sup>27</sup>, Ա. Մադոյանը<sup>28</sup> և այլ հեղինակներ։

Այս համառոտակի տեսությունից պարզ է դառնում, որ հայկական սգո երգերը ունենալով հագարամյա գոյություն, իրու ժամր դեռևս չեն

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 12։

<sup>22</sup> Միջնամ Ռ., Դայ միջնադարյան կաֆաներ, Երևան, 1975։

<sup>23</sup> Անհակյան Ռ., Ուշ միջանադարի հայ րանաստեղծությունը, Երևան, 1975։

<sup>24</sup> Դովիանիսիս Ռ., Թատրոնը միջնադարյան Դայաստանում, Երևան, 1978։

<sup>25</sup> Նազարյան Ծ., Ողբի և սրավման րանաստեղծություն, Երևան, 1972։

<sup>26</sup> Ղագինյան Ա., Ղիմառնությունը հայ բանաստեղծության մեջ, «Լրաբեր», 1974 - 1975։

<sup>27</sup> Սաֆարյան Վ., Կիլիկյան Դայաստանի գրականությունը, Երևան, 1990։

<sup>28</sup> Մադոյան Վ., Միջնադարյան Եայկական պոեմը, Երևան, 1985։

արժանացել հանգամանալից ամբողջական ուսումնասիրության և արժեքավորման:

Թաղման հետ կապված քնարերգության մեջ հասած անդրանիկ պատառիկները կապվում են մ.թ.ա. 2-1 դարերին և վերարերում Արտաշես արքային, սակայն իրեն առանձին տեսակ, սգո երգեր գրառված և հրապարակված են, ինչպես տեսանք, միայն 19 -րդ դ. Երկրորդ Կեսին, հետևաբար դժվար է պատկերացնել դրանց գարգացման, փոփոխման ընթացքը: Այնուամենայիկ, Ելենելով հնագիտական և պատմագրական այլկայլ նյութերից, փորձել ենք պարզել դրանց նախաստեղծ Էռության ընդհանուր ուրվանկարը, որը բաղդատելով այժմյան սգերգին, եկել ենք այն եգրակացության, որ դրանց հիմնական գաղափարները, մոտիվներն ու գեղարվառտական արտահայտչական միջոցները շատ քիչ փոփոխություններ են կրել դարերի ընթացքում:

Մեր աշխատանքի նպատակն է.

ա. Գնահատել հայ ժողովրդական սգո երգերի բոլոր հայտնի տպագիր և ձեռագիր հավաքութունները:

բ. Ամփոփ խոսք ասել սգո երգերի՝ որպես հայ ժողովրդական քնարական բանահյուսության մի տեսակի, ժամրային առանձնահատկությունների, կատարման և գրառման յուրահատկությունների մասին:

գ. Սգո երգերը քննել թաղման և մահվան հետ կապված սովորությունների ու հավատալիքների համակարգում:

դ. Դիտարկել սգո երգերի ափապարանության, տարատեսակների տարրերակման հիմունքները:

ե. Մանրամասն հետազոտել սգո երգերի մույիվային համակարգը իր նրբերանգներով, թեմաներն ու գաղափարները, բացահայտել դրանց նպատակառուղիվածությունը:

զ. Դաստատելով սգո երգերի հազարամյա գոյության իրողությունը՝ անդրադասալ դրանց գեղարվեստական առանձնաեատկություններին, արտահայտչածներին, բանաստեղծական կառույցներին և քնարահուգական երանգներին: